



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 675-Չհ/Ք

«04» 07 2012

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ <<ՄԱՅՐԵՆԻ>>, <<ՄԱԹԵՄԱՏԻԿԱ>>, <<ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ>>, 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ <<ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ>>, 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ <<ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒ>>, <<ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>>, <<ՀԱՆՐԱՀԱՇԻՎ>>, <<ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ>> ԵՎ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ <<ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ>>, <<ՌՈՒՍԱՑ ԼԵՋՈՒ>> ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի, 30-րդ հոդվածի 20-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով 2010 և 2011 թվականների դասագրքերի մրցույթների գնահատման ընդհանուր հանձնաժողովների որոշումները, ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտի մասնագետների կարծիքները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հանրակրթական դպրոցում գործածության երաշխավորել հետևյալ դասագրքերը.

ա.<<Զանգակ 97>> հրատարակչություն՝

<< Երկրաչափություն 8>> (հեղ.՝ Լ.Աթանասյան, Վ.Բուրուզով, Ս.Կադոմցև, Է.

Պոզդնյակ, Ի Յուդինա)

<<Երաժշտություն 6>> (հեղ.՝ Յու. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան)

բ. <<Տիգրան Մեծ>> հրատարակչություն՝

<<Ինֆորմատիկա 12>>- ընդհանուր հոսք (հեղ.՝ Ս.Ավետիսյան, Ս. Դանիելյան)

<<Ինֆորմատիկա 12>>- բնագիտամաթեմատիկական հոսք (հեղ.՝ Ս.Ավետիսյան, Ս. Դանիելյան)

<<Ինֆորմատիկա 7>> (հեղ.՝ Ս.Ավետիսյան, Ս. Դանիելյան)

<<Գրականություն 8>> (հեղ.՝ Դ.Գասպարյան)

գ. <<Անտարես>> հրատարակչություն՝

<< Հանրահաշիվ 8>> (հեղ.՝ Ս.Նիկողոսյի, Մ.Պոպոպով, Ն.Ռեշեպունիկով, Ա.Շևկին),

դ. <<Մանմար>> հրատարակչություն՝

<< Մաթեմատիկա 6>> (հեղ.՝ Բ.Նահապետյան, Ա. Աբրահամյան)

<< Ռուսաց Լեզու 12>>-հումանիտար հոսք (հեղ.՝ Ռ.Գրծեյան, Կ.Մխիթարյան, Ռ. Տեր-Առաքելյան)

ե. <<Էդիթ Պրինտ>> հրատարակչություն՝

<< Մայրենի 6>> (հեղ.՝ Դ.Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան)

զ. <<Աստղիկ Գրատուն>> հրատարակչություն՝

<<Հայոց Լեզու 8>> (հեղ.՝ Հ.Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան)

2. Դասագրքերի տպագրությունն իրականացնել Դասագրքերի շրջանառու հիմնադրամի և հրատարակչությունների միջև կնքվող պայմանագրերի հիման վրա:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:



Ա.ԱՇՈՏՅԱՆ